Primacy of the Armenian Apostolic Orthodox Church
of the United Kingdom and Republic of Ireland
His Grace Bishop Hovakim Manukyan, Primate

# Saint Yeghiche Armenian Church Parish
# Սբ Եղիշէ Հայոց Եկեղեցւոյ Ծուխ

**Priest in Charge Rev Fr Nshan Alaverdyan**
13b Cranley Gardens, Kensington London, SW7 3BB
Registered Charity No 1173403
*Pastoral office* t. +44 (0)20 7373 8133 email. info@styeghiche.org.uk
www.styeghiche.org.uk https://www.facebook.com/StYeghiche

## ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԹԵՐԹԻԿ - SUNDAY BULLETIN

**1: Today's Scripture Reading, 18th December 2022 Bulletin 53/2022**

### Fourth Sunday of Advent

**ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԷ ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻՆ ԳՐՈՒԱԾ ՆԱՄԱԿԷՆ 1:1-14**

Աստուած, որ վաղուց՝ շատ անգամներ ու շատ կերպերով՝ խօսած էր հայրերուն մարգարէներով, այս վերջին օրերը խօսեցաւ մեզի իր Որդիով, որ ժառանգորդ նշանակեց ամէն բանի եւ տիեզերքն ալ ստեղծեց անով: Ան իր փառքին շողն է ու իր էութեան նկարագրութիւնը, եւ իր զօրութեան խօսքով հաստատ կը բռնէ ամէն բան: Ի՛նք էր որ՝ մաքրելէ ետք մեր մեղքերը՝ բազմեցաւ բարձրերը, Աստուծոյ մեծափառութեան աջ կողմը, ա՛յնչափ գերադաս ըլլալով հրեշտակներէն, քանի որ անոնցմէ գերազանց անուն մը ժառանգեց:

Արդարեւ հրեշտակներէն որո՞ւն ըսաւ երբեք. «Դուն իմ Որդիս ես, ա՛յսօր ծնայ քեզ»: Եւ դարձեալ. «Ես Հայր պիտի ըլլամ անոր, ան ալ Որդի պիտի ըլլայ ինծի»:

Դարձեալ՝ երբ Անդրանիկը կը մտցնէ երկրագունդը՝ կ'ըսէ. «Աստուծոյ բոլոր հրեշտակներն ալ թող երկրպագեն անոր»:

Նաեւ հրեշտակներուն մասին կ'ըսէ. «Իր հրեշտակները հոգիներ կ'ընէ, եւ իր պաշտօնեաները՝ կրակի բոց»:

Իսկ Որդիին կ'ըսէ. «Քու գահդ, ո՛վ Աստուած, կը կենայ դարէ դար՝. քու թագաւորութեանդ մականը ուղղամտութեան մական է:

Դուն սիրեցիր արդարութիւնը եւ ատեցիր անօրէնութիւնը. հետեւաբար, ո՛վ Աստուած, քու Աստուածդ օծեց քեզ ցնծութեան իւղով՝ ընկերակիցներէդ աւելի»:

Նաեւ. «Տէ՛ր, դո՛ւն սկիզբէն դրիր երկրի հիմերը, ու քո՛ւ ձեռքերուդ գործն է երկինքը:

Անոնք պիտի կորսուին, բայց դուն կը մնաս. բոլորը պիտի մաշին հանդերձի պէս:

Պիտի ոլորես զանոնք ծածկոցի պէս, եւ պիտի փոխուին. իսկ դուն՝ միշտ նո՛յնն ես, ու քու տարիներդ պիտի չպակսին»:

Եւ հրեշտակներէն որո՞ւն ըսաւ երբեք. «Բազմէ՛ իմ աջ կողմս, մինչեւ որ քու թշնամիներդ պատուանդան դնեմ ոտքերուդ»:

Միթէ անոնք բոլորը պաշտօն կատարող հոգիներ չե՞ն, ղրկուած սպասարկելու անոնց՝ որ պիտի ժառանգեն փրկութիւնը:

### The Epistle of St Paul to the Hebrews 1:1-14;

**God's Final Word: His Son**

In the past God spoke to our ancestors through the prophets at many times and in various ways, but in these last days he has spoken to us by his Son, whom he appointed heir of all things, and through whom also he made the universe. The Son is the radiance of God's glory and the exact representation of his being, sustaining all things by his powerful word. After he had provided purification for sins, he sat down at the right hand of the Majesty in heaven.

**Our Aim;**

**St Yeghiche Armenian Church aims to be the church for the whole community; a place where those who have faith and those who yet to find it or renew it, can come together as a family of God's children; a place where all will be received with tolerance, understanding and friendship.**

## 2: A short interpretation of the Scripture reading

So he became as much superior to the angels as the name he has inherited is superior to theirs.

**The Son Superior to Angels**

For to which of the angels did God ever say,
“You are my Son; today I have become your Father” [a] ? Or again,
“I will be his Father, and he will be my Son” [b] ? And again, when God brings his firstborn into the world, he says, Let all God’s angels worship him.” [c]
In speaking of the angels he says, “He makes his angels spirits, and his servants’ flames of fire.” [d]
But about the Son he says, “Your throne, O God, will last for ever and ever; a scepter of justice will be the scepter of your kingdom. You have loved righteousness and hated wickedness; therefore God, your God, has set you above your companions by anointing you with the oil of joy.” [e]
He also says, “In the beginning, Lord, you laid the foundations of the earth, and the heavens are the work of your hands. They will perish, but you remain; they will all wear out like a garment. You will roll them up like a robe; like a garment they will be changed. But you remain the same, and your years will never end.” [f] To which of the angels did God ever say, Sit at my right hand until I make your enemies a footstool for your feet” [g] ? Are not all angels ministering spirits sent to serve those who will inherit salvation?

## ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ 17:1-10

Եւ ըսաւ իր աշակերտներուն. «Անկարելի է որ գայթակղութիւններ չգան. բայց վա՜յ անոր, որուն միջոցով կու գան: Աւելի օգտակար պիտի ըլլար անոր, որ իշու ջաղացքի քար մը կախուէր իր վիզէն ու ծովը ձգուէր, քան թէ գայթակղեցնէր այս պզտիկներէն մէ՛կը: Ուշադի՛ր եղէք դուք ձեզի: Եթէ եղբայրդ մեղանչէ քեզի դէմ՝ յանդիմանէ՛ զայն. ու եթէ ապաշխարէ՝ ներէ՛ անոր: Եթէ օրը եօթն անգամ մեղանչէ քեզի դէմ, եւ օրը եօթն անգամ վերադառնայ քեզի ու ըսէ՝ “կ’ապաշխարեմ”, ներէ՛ անոր»:

Առաքեալները ըսին Տէրոջ. «Աւելցո՛ւր մեր հաւատքը»: Տէրը ըսաւ. «Եթէ մանանեխի հատիկի չափ հաւատք ունենայիք, կրնայիք ըսել այս թթենիին. “Արմատախի՛լ եղիր եւ տնկուէ՛ ծովուն մէջ”. ան ալ պիտի հնազանդէր ձեզի»:

«Բայց ձեզմէ ո՞վ, ունենալով երկրագործ կամ հովիւ ծառայ մը, երբ ան տուն մտնէ արտէն՝ իսկոյն կ’ըսէ անոր. “Գնա՛, սեղա՛ն նստէ”: Հապա չ’ը՞սեր անոր. “Պատրաստէ՛ իմ ընթրիքս, ու գօտիդ կապած՝ սպասարկէ՛ ինծի, մինչեւ որ ես ուտեմ եւ խմեմ. յե՛տոյ դուն ալ կեր ու խմէ”: Միթէ շնորհապա՞րտ կ’ըլլայ այդ ծառային՝ իրեն հրամայուած բաները ընելուն համար. չեմ կարծեր: Նոյնպէս դուք, երբ ընէք ձեզի հրամայուած բոլոր բաները՝ ըսէ՛ք. “Մենք անպէտ ծառաներ ենք. ըրինք ինչ որ պարտական էինք ընել”»:



Jesus teaching the twelve

## The Holy Gospel of Jesus Christ according to Luke 17:1-10

Jesus said to his disciples: “Things that cause people to stumble are bound to come, but woe to anyone through whom they come. It would be better for them to be thrown into the sea with a millstone tied around their neck than to cause one of these little ones to stumble. So watch yourselves.

“If your brother or sister [a] sins against you, rebuke them; and if they repent, forgive them. Even if they sin against you seven times in a day and seven times come back to you saying ‘I repent,’ you must forgive them.”

The apostles said to the Lord, “Increase our faith!” He replied, “If you have faith as small as a mustard seed, you can say to this mulberry tree, ‘Be uprooted and planted in the sea,’ and it will obey you.

**Safeguarding and Health and Safety issues are taken seriously by Saint Yeghiche Armenian Church, copies of the policy document are available for view, for any related issues please report or contact members of the parish council.**

“Suppose one of you has a servant ploughing or looking after the sheep. Will he say to the servant when he comes in from the field, ‘Come along now and sit down to eat’? Won’t he rather say, ‘Prepare my supper, get yourself ready and wait on me while I eat and drink; after that you may eat and drink’? Will he thank the servant because he did what he was told to do? So you also, when you have done everything you were told to do, should say, ‘We are unworthy servants; we have only done our duty.’ ”

## Ս. Հակոբ Մծբնա Հայրապետի, Մարուգե ճգնավորի և Մելիտոս եպիսկոպոսի հիշատակության օր

Ս. Հակոբ Մծբնա Հայրապետն Ընդհանրական Եկեղեցու հեղինակավոր և սիրված սրբերից է: Կատարած բազում հրաշքների շնորհիվ նրան կոչել են նաև «Սքանչելագործ»: Վարքագրական աղբյուրների համաձայն՝ Ս. Հակոբը պարթևական տոհմից էր և մեր առաջին Հայրապետ Ս. Գրիգոր Լուսավորչի հորաքրոջ որդին: Երբ Անակ Պարթևի տոհմը բնաջնջվել է, դայակները մանուկ Սուրենին և Հակոբին փախցրել են Կեսարիա, ուր նրանք դաստիարակվել են քրիստոնեական ոգով: Շատ չանցած՝ մանուկ Հակոբն իր քրոջ՝ Սակղենի հետ, տեղափոխվում են Պարսկաստան և որոշ ժամանակ ապրում արքունիքում: Սակայն Հակոբը թողել է այդ ճոխ կյանքը, դարձել ճգնավոր: Հետո գնացել է Մծբին, հանդիպել Մարուգե ճգնավորին, ով հռչակված էր սրբակենցաղությամբ: Նրանից լսելով, որ մարդկանցից շատերը, թեպետ, հավատքի են եկել, բայց թերահավատ են և կասկածում են Նոյյան տապանի գոյությանը, որոշել է բարձրանալ լեռը, տապանը տեսնել և մի մասնիկ բերել: Հակառակ անկոտրում կամքին՝ չի կարողացել հասնել Արարատի գագաթը և երկար տանջվելուց հետո նիրհել է: Երազում հրեշտակն այցելել է նրան և տապանից մի մասունք դրել գլխատակին: Ըստ ավանդության՝ Ս. Հակոբի պառկած տեղում սառնորակ աղբյուր է բխել, բուժիչ և հրաշագործ հատկություններ ունեցել, իսկ աղբյուրի կողքին հետագայում սրբի անունով եկեղեցի է կառուցվել: Նոյյան տապանի այդ մասունքը ցայսօր պահվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում: Լինելով ժամանակի պատկառելի անձնավորություններից մեկը՝ մասնակցել է 325 թվականի Նիկիայի տիեզերաժողովին: Իր կյանքի ընթացքում բազմաթիվ հրաշքներ է գործել: Մծբինի եպիսկոպոսի մահից հետո Աստված Մարուգեին հայտնել է, որ Հակոբն է լինելու աթոռի արժանի հետնորդը: Երկար տարիներ իր հոտը հովվելուց հետո մահացել է 350 թվականին:
Մելիտոս եպիսկոպոսը ծնվել է Փոքր Հայքի Մելիտինե քաղաքում և 358 թվականին եղել Սեբաստիա քաղաքի եպիսկոպոսը: 360 թվականից գահակալել է Անտիոքի աթոռը: Նա անընդհատ պայքար է մղել արիոսականների դեմ: Նախագահել է 381 թվականի Կ.Պոլսի երկրորդ տիեզերաժողովը, սակայն մահացել է ժողովի ավարտից առաջ:

## Commemoration of the Pontiff St. James of Nisibis, hermit St. Maruge and Bishop St. Melitus

Pontiff St. James of Nisibis is one of the authoritative and beloved saints of the Universal Church. He has deserved the epithet “Thaumaturge” (Wonderworker) for the numerous miracles relating to his name. According to hagiographical sources St. James was from a Parthian dynasty and the nephew of St. Gregory the Illuminator. When the family members of Anak the Parthian were killed nurses secretly fled to Caesaria taking with them baby Suren and James where they were educated in Christian spirit. Soon baby James and his sister Sakden were taken to Persia and for a while lived in the royal palace. However, James refused from safe and well-to-do life and became a hermit. He left for Nisibis where he met hermit St. Maruge, who was famous for leading a life befitting saints. Learning from the hermit Maruge that many people despite their conversion to true faith were skeptic and suspicious about the existence of Noah’s Ark James decided to climb the mountain in order to see the Ark and bring a piece of it. Despite his inflexible willpower he couldn’t reach the peak and after long sufferings he had a short nap. The angel visited him in his dream and put a piece of the Ark under his head. According to the tradition in the place where St. James had lain down appeared a cold stream having healing and miraculous qualities. In the future a church bearing the saint’s name was built nearby the stream. The piece of the Ark is up to date kept in the museum of the Mother See of Holy Etchmiadzin. He is one of the clergymen participating in the Nicene Council in 325. After the death of the Bishop of Nisibis God appeared to Maruge and told him that St. James was the deserving candidate for the Bishop of Nisibis. St. James passed away in 350, after leading the flock for a long time.

Bishop St. Mielitus was born in Melitene, Armenia Minor. In 358 he was the Bishop of Sebastia. In 360 he ascended the throne of Antioch. He struggled against the Arians. In 381 he presided the Second Ecumenical Council convened in Constantinople but unfortunately passed away before the end of the Council.

Thank you

St Yeghiche Armenian Church Council would like to extend its gratitude to all members of our community who supported our Christmas fair last week. A special thank you to our Ladies Guild for their hard work in preparing delightful and tasty offer of Armenian dishes for the festive occasion.

***St Yeghiche Armenian Church Parish***

Registered Charity No 1173403

13b Cranley Gardens, Kensington London SW7 3BB

t.+44 20 7373 8133 e. info@styeghiche.org.uk w. www.styeghiche.org.uk

## New Year and Christmas

### Church Service Timetable

***Christmas Day***

*Sunday, 25th December 2022*

**10:00** Divine Liturgy And Blessing of Sub-Deacons and Acolytes And Granting of Orarion. Սուրբ Պատարագ եւ Դպրական կիսասարկաւագական Աստիճանի Շնորհում եւ Ուրարի Տուչութիւն.

***New Year / Նոր տարի***

*Sunday, 1st January 2023*

**11:00** Divine Liturgy and blessing of Pomegranates
Սբ. Պատարագ, եւ Նռնօրհնէք

***Jerakalouys, Christmas Eve** Prayers / **ՃՐԱԳԱԼՈՅՑ ՍԲ.ԾՆՆԴԵԱՆ***

*Thursday, 5th January 2023*

**16:00** Scripture readings
**17:00** Christmas Eve Eucharist and Holy Communion
**18:55** Blessing of home.
Սբ. Ծննդեան Ճրագալոյցի
Սբ. Պատարագ Եւ տՆօրհնէք

***Theophany and Epiphany / ՍԲ. ԾՆՈՒՆԴ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ***

*Friday, 6th January 2023*

**11:00** Episcopal Divine Liturgy
**12:45** Blessing of the Water.
Սբ. Պատարագ եւ ջրօրհնէք
(Պատարագիչ՝ Յովակիմ Սրբ.),

***Requiem Service in Cemeteries / Մեռելոց. Հոգեհանգիստ ի գերեզմանատունս***

*Saturday, 7th January 2023*

**11:00 – 12:30** Rev Fr Nshan will be available at Gunnersbury Cemetery to conduct individual prayers. If you require blessing at any other cemetery, please contact us to arrange Clergy visit.

**All faithful are invited and encouraged to join us with their prayers.**
For enquiries please contact any member of the St Yeghiche Armenian Church Parish Council, manning the desk at the church entrance or email info@styeghiche.org.uk

*May the Joy and Peace of Christmas be with you now and throughout the coming year*

## 3: This week’s message from our Priest in Charge

**Մեկնութիւն եւ հոգեւոր պատգամ Աւետարանի այս օրուայ ընթերցուածից.**

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. Ամէն

Եւ առաքեալները Տիրոջն ասացին. ***«Աւելացրո՛ւ մեր հաւատը»*** *(Ղուկ. 17:5):*

Սիրելի հաւատացեալ եղբայրներ եւ քոյրեր,

Շատերի համար զարմանալի է, որ առաքեալներն են խնդրում իրենց հաւատի աւելացում, առաքեալները, որոնք միշտ Յիսուսի հետ էին եւ պէտք է որ բոլորից աւելի հաւատ եւ վստահութիւն ունենային Յիսուսի նկատմամբ: Թւում է՝ մնացեալ բոլոր մարդիկ կարող էին դա անել, բայց առաքեալները դրա կարիքը չպիտի որ ունենային: Ուրեմն, ինչո՞ւ առաքեալները այս խնդրանքով մօտեցան Տիրոջը: Բայց մարդկային բնութիւնն այլ տրամաբանութեամբ է գործում: Առաքեալները տեսնում էին, որ Յիսուս կոյրերի աչքերն է բացում, կաղերին քայլել եւ խուլերին լսել տալիս, ծովն ու բնութեան տարերքը հնազանդեցնում, դիւահարներին խօսքով բժշկում եւ անգամ մահացածների յարութիւն է տալիս: Նրանք մտածում էին, որ իրենք էլ աղօթում են, իրենք էլ, թողնելով իրենց սիրելի մարդկանց եւ հարազատ վայրերը, հետեւում են Յիսուսին, բայց նոյնը իրենց չի պատահում: Եւ կարծում էին, որ իրենց հաւատքը թերեւս մի փոքր պակաս է նման նշաններ գործելու համար եւ մօտեցան Քրիստոսին այս խնդրանքով: Բայց Յիսուս նրանց ասաց. ***«Եթէ մանանեխի հատիկի չափ հաւատ ունենաք եւ այս թթենուն ասէ՛ք.***

***“Արմատախի՛լ եղիր եւ տնկուի՛ր ծովի մէջ”, նա՛ իսկ կը հնազանդուի ձեզ»*** *(Ղուկ. 17:5):* Սրանով Տէրը կարծես ցոյց է տալիս, որ ոչ թէ հաւատք ունեն, որ շատ քիչ պակաս մաս ունի, այլ որ սխալ պատկերացում ունեն հաւատքի մասին եւ դուրս է գալիս, որ անգամ մանանեխի հատիկի չափ ճշմարիտ հաւատ չունեն: Այլապէս ճիշտ մօտեցման, իրաւ հաւատքի դէպքում Աստուած իրենց միջոցով մեծամեծ գործեր եւ հրաշքներ ցոյցը կը տար, ինչ որ յետոյ հէնց իրենց՝ առաքեալների եւ շատ քրիստոնեայ սուրբերի կեանքի մէջ իրագործուեց եւ տեսանելի եղաւ: Պօղոս առաքեալը հաւատքի մասին յայտնի սահմանում ունի. ***«Ի՞նչ է հաւատը, եթէ ոչ՝ յուսացուած բաների հաստատումը եւ ապացոյցն այն բաների, որոնք չեն երեւում»*** *(Եբր.11:1):* Չտեսած բաների նկատմամբ մեր հաւատքը յաճախ կամայ թէ ակամայ կասկածներով, երկմտանքով է լեցուն: Մարդկային հաւատը հիմնուած է նաեւ փաստերի վրա՝ իրական պտուղից ծառը ճանաչելու տրամաբանությամբ. ***«Արդարեւ ի սկզբանէ աշխարհի Աստծու աներեւոյթ յատկութիւնները, այն է՝ Նրա մշտնջենաւորութիւնը եւ զօրութիւնը եւ աստուածութիւնը, իմանալի կերպով տեսանելի են Նրա ստեղծածների մէջ*** *(Հռոմ. 1:20):* Մարդկային հաւատը մեզ տանում է Աստծոյ հետ հանդիպումի, իսկ դրանից յետոյ այլեւս միտքը, սիրտն ու հոգին Աստծոյ առաջ բացելու պէտքը կայ, որ Աստուած գործի մեր միջոցով: Ինչպէս յաճախ տարբերակումը շեշտելու համար ասւում է՝ այլ է հաւատալ Աստծոյ գոյութեանը, այլ է հաւատալ Աստծուն: Յակոբոս առաքեալը այս տարբերութիւնը ցուցադրելու եւ գործնական հաւատքի մղելու համար ասում է. ***«Դու հաւատում ես, որ մէկ է Աստուած. լաւ ես անում: Դեւերն էլ են հաւատում եւ դողում: Ո՛վ փուչ մարդ, ուզո՞ւմ ես իմանալ. հաւատը դատարկ բան է առանց գործերի»*** *(Յակ.2:19-20):*

Նոր Կտակարանի հաւատը նոյնը չէ, ինչ որ աշխարհում տարածուած կրօնների հաւատացեալներինը: Երկնային չափանիշ է բերում մեր կեանք Աւետարանի միջից մեզ եկող հաւատքը, որ Հոգու յայտնութիւն եւ շնորհ է. ***«Մէկին Հոգուց տրուած է իմաստութեան խօսք, միւսին՝ գիտութեան խօսք՝ նոյն Հոգուց, միւսին՝ հաւատ՝ նոյն Հոգով, միւսին՝ բժշկումների շնորհ՝ նոյն Հոգով»*** *(Ա Կորնթ. 12:8-9):* Այն Սուրբ Հոգու շնորհն է, որ սերմի պէս ընկնելով մեր սրտի արտի մէջ՝ ծաղկում եւ պտղաբերում է: Մանանեխի հատիկի օրինակը պատահական չէ, քանզի այն, ըստ Քրիստոսի պատմած առակի, Աստծոյ արքայութեան խորհրդանիշերից մէկն է. ***«Երկնքի արքայութիւնը նման է մանանեխի հատիկի, որ մի մարդ, առնելով, սերմանեց իր արտի մէջ: Այն փոքր է, քան բոլոր սերմերը. սակայն երբ աճում է, բոլոր բանջարներից աւելի է մեծանում ու ծառ է լինում, այն աստիճան, որ երկնքի թռչունները գալիս են ու նրա ճիւղերի վրայ հանգստանում»:***

Այս դէպքում մանանեխի օրինակը Քրիստոս հաւատքի համար է գործածում, սրանով կարծես նաեւ ուղղակի կապ է ստեղծում հաւատքի միջոցով Աստծոյ արքայութեան գաղափարն ի մտի ունենալու, իբրեւ վերջնանպատակ՝ Աստծոյ արքայութեանը հասնելու համար: Երբ մենք ոչ թէ ուրիշների համար զարմանալի գործեր եւ հրաշքներ անելու միտումն ունենք, այլ Աստծուն սիրելով՝ Նրա առաջ հոգի բանալու, ի սրտէ «եկեսցէ արքայութիւն Քո» ասելու եւ այդ արքայութիւնն իսկապէս ցանկալու, այնժամ ստանում ենք նաեւ Իր Հոգու շնորհները: Առաքեալները Քրիստոսից իշխանութիւն եւ զօրութիւն ստացան բոլոր դեւերի վրայ, իշխանութիւն մարդկանց քարոզելու Աստծոյ արքայութիւնը, բժշկելու ախտաւորներին եւ հալածելու դեւերին: ասելու եւ այդ արքայութիւնն իսկապէս ցանկալու, այնժամ ստանում ենք նաեւ Իր Հոգու շնորհները: Առաքեալները Քրիստոսից իշխանութիւն եւ զօրութիւն ստացան բոլոր դեւերի վրայ, իշխանութիւն մարդկանց քարոզելու Աստծոյ արքայութիւնը, բժշկելու ախտաւորներին եւ հալածելու դեւերին:

Հաւատքով է սկիզբ առնում մեր հոգեւոր կեանքը, հաւատքով է զօրանում եւ վերելք ապրում մեր հոգին: Սակայն պսակը պէտք է լինի Աստծոյ եւ մարդկանց նկատմամբ սէրը, ինչպէս առաքեալն է ասում. «***Եթէ ունենամ ամբողջ հաւատը՝ մինչեւ իսկ լեռները տեղափոխելու չափ, բայց սէր չունենամ, ոչինչ եմ»*** *(Ա Կորնթ. 13:2)*:

Եկէք մենք եւս, քննելով մեր պատկերացումները հաւատքի եւ հաւատքի կեանքի մասին, առաքեալների խօսքերը վերածենք աղօթքի՝ ասելով. «Տէ՛ր, աւելացրու մեր հաւատքը, որ ապրենք այս աշխարհում, բայց այս աշխարհինը չլինենք, որ մեր սրտերը ոչ թէ աշխարհին, այլ Քեզ կապուած լինեն», քանի որ գիտենք, որ ***«առանց հաւատի անհնար է հաճելի լինել Աստծուն, քանի որ նա, ով մօտենում է Աստծուն, պէտք է հաւատայ, որ Աստուած կայ եւ վարձահատոյց է լինում նրանց, ովքեր փնտռում են իրեն»*** *(Եբր. 11:6)*:

Թող Տէր Յիսուս Քրիստոսի շնորհը ձեզ հետ լինի՝ աւելացնելու եւ զօրացնելու հաւատքը, որ մեր հաւատքի գործերով եւ կեանքով միշտ փառաւորենք Ամենասուրբ Երրորդութեանը՝ Հօրը եւ Որդուն եւ Սուրբ Հոգուն այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

**Սբ Եղիշէի Հոգեւոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Ալավերդեան**

## DAILY BIBLE READINGS FOR 2022 According to the Lectionary of the Armenian Apostolic Church

| | |
|---|---|
| 19 Novwmber | The Holy Fathers Sts. Ignatius [of Antioch] and Addai, and Maruthas the Bishop<br>Wisdom 5:1-8; Jeremiah 6:16-21; 1 Corinthians 4:9-16; Mark 9:32-36 |
| 20 November | Sts. Theopompas the Bishop, Theonas the Martyr, and the four Soldiers—Basus, Eusebe, Autyche, Basilides<br>Proverbs 24:1-12; Jeremiah 15:19-20; Hebrews 12:1-7 |
| 21 November | Hebrews 2:1-10; Luke 17:11-19 |
| 22 November | Holy Virgins Indus and Domna, Clericus the Elder and the 20,000 of the Church of Nicomedia who were burned by fire<br>Wisdom 3:1-8; Jeremiah 30: 18-22; 1 Peter 4:12-19; John 15:17-25 |
| 23 November | Hebrews 3:12-4:10; Luke 18:1-8 |
| 24 November | St. David the Prophet and Holy Apostle James<br>2 Samuel 5:1-10; 1 Kings 2:1-11; Ezekiel 34:20-27; James 1:1-12; Matthew 22:41-46 |

### Announcement

## Organist / Keyboard Player Required

St Yeghiche Armenian Church Parish is looking to engage an enthusiastic Organist / Keyboard player to assist and enhance our Sunday Divine Liturgy and its glorification of our Lord.

The position entails playing on Sunday's Divine Liturgy, and other religious events throughout the Year.

Fees by negotiation – Immediate start

If interested please contact
Choirmaster Mr Aris Nadirian or
Parish Council Chairman Mr Viken Haladjian
by calling 020 73738133 or by emailing to
info@styeghiche.org.uk



The Church organ is the second largest in the country, lavishly carved and decorated with prefigures of Gothic architecture. It is noteworthy that Sir Arthur Seymour Sullivan, illustrious English composer was the first organist at St Yeghiche Armenian Church (previously known as St. Peter's Church) who played the first version of the existing organ from 1867 to 1871. .

# St Yeghiche Armenian Church Parish
# Սբ Եղիշէ Հայոց Եկեղեցւոյ Ծուխ



## Divine Liturgy
## And Blessing of Sub-Deacons
## and Acolytes
## And Granting of Orarion

Presided by:

**His Grace**
**Bishop Hovakim Manukyan**

Primate of the Armenian Church Diocese
of UK and Ireland

## Սուրբ Եւ Անմահ Պատարագ
եւ
## Դպրական եւ կիսասարկաւագական
## Աստիճանի Շնորհում
եւ
## Ուրարի Տուչութիւն

Ձեռամբ թեմիս առաջնորդ
Գերշ. Տ. Յովակիմ եպս. Մանուկեանի

on

Sunday 25th December, 2022

Morning service at:9.30 am
Divine Liturgy at 10:00 am

Սբ. Պատարագի սկիզբը՝ ժամը 10:00
Աստիճանի Շնորհման կարգը՝
յաւարտ սբ. Պատարագի


Registered Charity No 1173403
St Yeghiche Armenian Church Parish Ltd, 13b Cranley Gardens, Kensington London SW7 3BB
t.+44 20 7373 8133 e. info@styeghiche.org.uk f. https://www.facebook.com/StYeghiche
w. www.styeghiche.org.uk

## 4: Հոգեհանգիստ - Memorial Service

Repose of the soul service at St Yeghiche Armenian Church is requested:

By Mrs Vartouhi Khachikian and Hrach, Ari, Vahe' Boghosian for the soul of their Daughter and Husband who was also a loving Wife, Mother and Grandfather the late **ROUBINA BOGHOSIAN** and **BERJ KHACHIKIAN**, also for all the old and new deceased members of the **KHACHIKIAN** and **BOGHOSIAN** Families.

By Hranoush, Garabed, Harutyoun, Ovsanna and Varag Atanosian for the soul of their Daughter and Sister the late **ANOUSH ATANOSIAN**, also for all the old and new deceased members of **ATANOSIAN** Family.

By Sonig, Aliac and Heros Jojaghaian for the soul of their Husband who was also a loving Father and Grandfather the late **ANTRANIG JOJAGHAIAN**, also for all the old and new deceased members of **JOJAGHAIAN** Family.

By Never Boghosian and Family for the soul of their Husband who was also a loving Father and Grandfather the late **HAMPARTSUM BOGHOSIAN**, also for all the old and new deceased members of the **BOGHOSIAN** and **SOSIKIAN** Families.

By Avedis and Ovsanna Arzoyan and Family for the soul of their Father who was also a loving Grandfather the late **GEORGE ARZOYAN**, also for all the old and new deceased members of **ARZOYAN** Family

By Viken, Hourie, Zovig Haladjian and Arda and Varag Atanosian and Family for the foul of their Mother who was also a loving Grandmother the late **OVSANNA KOZANIAN HALADJIAN**, also for all the old and new deceased members of the **HALADJIAN** and **KOZANIAN** Families.

By Rand & Hayek Families for the soul of their Mother who also was a loving Grandmother the late **ANAHID NAKASHIAN** on the 2nd anniversary occasion of her passing, also for all the old and new deceased members of the **HAYEK**, **NAKASHIAN** and **RAND** Families.

May the Lord rest the souls of the deceased members of our community in peace and console their loved ones with the comforting power of His Holy Spirit.

## ENQUIRIES:

For ecclesiastical/parish matters including requests for Christenings, Home Blessing (Dnorhnek), Donations in Lieu of Flowers, arrangements for Marriages and other church administrative matters please contact Mr Viken Haladjian, phone: **07970 146 280** or by emailing info@styeghiche.org.uk
Alternatively please approach a member of the Parish Council at church every Sunday after Badarak.

**Requiem Service (Hokehankisd)**
For Requiem Service (Hokehankisd), please call the administration number at **07970 146280**, or e-mail us your request to info@styeghiche.org.uk by Thursday, in order to include the name(s) of your beloved one(s) in the Sunday bulletin. There is no set monetary amount for requesting Hokehankisd; any amount donated is appropriate and appreciated. **Please remember our Church in your prayers.** *Your kind donations are gratefully*

## ANNOUNCEMENT:

St Yeghiche Armenian Church Parish Council would like to invite members of the Armenian community to become registered members and take part in Parish activities. Become a dues paying member and let your voice be heard, be eligible to vote and be elected to one of Parish offices. Please contact a member of the Parish Council at the side entrance desk of the Church or visit our website www.styeghiche.org.uk

We welcomes your donations for prayers and support towards church annual expenses. **May the Lord bless you and your family, keep you away from all harm and fulfil all you prayers and dreams.**

-You may send in your donations as follows: Please post your cheques to: St Yeghiche Armenian Church Parish, *13b Cranley Gardens, Kensington, London, SW7 3BB*. Please make your cheques payable to: ***"St Yeghiche Armenian Church"***.

-You can also pay by bank transfer to St Yeghiche Armenian Church Parish Ltd Account at: HSBC, Acc.no: 42674432, Sort code: 40-02-26, IBAN: GB13HBUK40022642674432, BIC: HBUKGB4106F

-Alternatively you may use our QR Code which will enable you to make donations directly to the Church PayPal account. Please scan this QR Code to make your electronic weekly, monthly or periodical contributions. *Thank you.* **St Yeghiche Armenian Church Parish Council**

PayPal
Scan. Pay. Go.

**St Yeghiche Armenian Church is a Registered Charity, Reg No 1173403.**
**Please complete a Gift Aid Form with your donation. Forms are available from Parish Council.**